ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Կրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թ. մայիսի 6-ի N ՆՀ -728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքների նախադպրոցական ուսումնական հաստատությունների կողմից Հայաստանի Հանրապետության կրթության մասին օրենսդրության և կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ընդունած նորմատիվ ակտերի կատարումը վերահսկելու և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նախադպրոցական կրթության ոլորտի պետական քաղաքականության իրականացումը ուսումնասիրելու նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

Սաֆարյան Հ. – մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի վարիչ (նախագահ)

Չատիկյան Գ. –մարզպետարանի աշխատակազմի կանանց, ընտանիքի, երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ (հոգեբան)

Բիձյան Մ. - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի կրտսեր մասնագետ

2. Հանձնաժողովին (նախագահ Հ. Սաֆարյան)՝

1) հանձնաժողովի աշխատանքներին ներգրավել մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի, տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչությունների համապատասխան մասնագետներին և համապատասխան համայնքների ներկայացուցիչներին (համաձայնությամբ) :

2) յուրաքանչյուր նախադպրոցական ուսումնական հաստատության ուսումնասիրությունից հետո 10-օրյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն:

3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Ա. Ղուկասյանին
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ն. ՊՈՂՈՍՅԱՆ